

ՀԷՔԵԱԹՆԵՐ ¹⁾

Հէքեաթ հէքեաթ պապրս ա, ²⁾

Ղաշխայ քուռակ տակըս ա,

Նիլնեմ էթամ յերեւան,

Յերեւանայ կուտ բերեմ.

Կուտը տանեմ տամ հաւերին,

Հաւերն ինձ ձու—ձու տան.

Ձու—ձուն տանեմ խառաղին տամ,

Խառաղն ինձ մի շրու տայ,

Շրուն տանեմ չորանին տամ,

Չորանն ինձ մի գառը տայ.

Գառը տանեմ Աստուն տամ,

Աստոծ ինձ մի աղպէր տայ:

«Ա՛ղպէր, աղպէր, ջան աղպէր»

«Ես սարի տակին աղպէր,

«Դու բերդի տակին աղպէր.

«Չալ չալ կովերն ի՞նչ էլան,

—Նախրատափին գիւմ էլան,

Ժոււմէ ժում կաթ կ'տան:

ԱՐՋԷ ՔԻՆԷ:

Ընում ա չի ընում մի տէրտէր: Էս տէրտէրը էնքամ զուտ-
թով ա ընում, որ ամեն օր գեղի ժամը շալակում ա տանում
մէշէն, քնդէ աղօթք անում՝ էլ եգ բերում գեղը:

Մի օր էլ ըսենց ժամը շալակէ՝ տարել էր մէշէն, նրան մի ար-
ջի քոթոթ ռաստ եկաւ. հարցրեց թէ էս ժամը խի՞ ա բերէ:
Տէրտէրն ասեց. բերել եմ միջին աղօթք անեմ:

(1) Այս հէքեաթները ժողովել եմ Երևանեան Նահանգում, Վաղար-
շապատ գիւղում և գրել եմ բուն տեղական բարբառով:

(2) Երբեմն հէքեաթները այսպիսի Նախարանով են սկսում:

— Թէ բաս ըտեհնց ա, ասեց արջի քոթոթը, որ դու էգքում դռնով ես, արի իրար հեննայ կոխ պրծնենք. — ո՞վ ում գեննալը տայ՝ նա նրան ուտի: Տէրտէրն ասեց. լաւ, արի կոխ պրծնենք: Արջի քոթոթն ու տէրտէրը կոխ պրծան: Արջի քոթոթը վէ կալաւ տէրտէրին գեննալը տուեց. ուղում էր նրան թիքայ թիքայ անի՝ տէրտէրը աղաչանք, պաղատանք թէ.

— Աստու սիրուն ինձ մի ուտի. ես քեզ կ'տանեմ մեր տունը, լաւ կ'պահեմ, մուղաթ կ'կենամ: Արջի քոթոթն էլ ռապի էլաւ ու տէրտէրի հեննայ էկաւ գեղը:

Արջի քոթոթը տէրտէրի տանը էլ հաց չթողաց՝ կերաւ. իեղճ տէրտէրը սրա ձեռից չէր իմանում ի՞նչ անի, դւո՞րն էթայ: Վերջը միտք արեց, որ տանի իրանց թագաւորին փէշքաշ անի, բախի նրա ձեռից պրծնի, թէ չէ նա իրանց տաշտ ու մաղը կ'կապի — տանը էլ զագ չի թողայ կ'ուտի կ'հատացնի: Տէրտէրը բսենց էլ արեց. փեկալաւ արջի քոթոթը տարաւ թագաւորին փէշքաշ: Թագաւորն էլ առաւ, հաւեսի խաթեր պահեց, Համայ մի քանի օրէն եզը տեհաւ որ չէ, էս արջի քոթոթը իրա տունը կ'քանդի. ինչքամ՝ տալիս են, ասում ա — սոված եմ. միտք արեց որ մի գհով կորցնիլ տայ:

Թագաւորը իրա նազիր, վէզրին ասեց, որ մի ջադուքեար պառաւ կանչել տան, բալքի նա սրան մի ճար անի: Վնացին մի պառաւ կնիկ բերին: Թագաւորը հարցրեց, թէ էնթալուր տեղ չի՞ գիտայ, որ էս արջի քոթոթին զրկեն, էլ եզ չգայ: Պառաւն ասեց.

— Թագաւորն ապրած կենայ, խի՞ չեմ գիտայ. օխոր սարի քամակին մի մէշայ կայ. գրան որ զրկես էն մէշիցը ցախ բերի՝ էլ եզ չի գայ, ընդէ քառասուն աղպէր գեւը դրա մենձ թիքէն անկաջը կ'թողան:

— Լաւ, ասեց թագաւորը. կանչել տուեց արջի քոթոթին, ասեց. պտի էթաս օխոր սարի քամակին մի մէշայ կայ. ինձ հմար ընդհան հարիր սէլ ցախ բերես. պէտքն ա:

— Զո՛ւխտ աչքիս վրա, ասեց արջի քոթոթը. ինձ հարիր սէլ տու, իրա սէլորներովը, ճամփի պաշար. նրանից գէնը ցախ բերելը իմ շինքին:

Արջի քոթոթը ինչ ուղել էր ճամփի հմար, թագաւորը տուեց ու ճամփու գրեց, էս մեր արջի քոթոթը հարիր սէլը աղաքն

արած՝ հող տսելօն, քէֆ անելօն էր ճամփայ էթում: Քշերը որդէ մթնում էր՝ վեր էր գալի, կրակ անում. սէլերի եզներից մինը մորթում, էփում. սէլսրների հեննայ ուտում. սէլն էլ մէկել սէլերի քամակիցը կապում՝ էլի էթում: Ընենց որ ընչանք մէշի զրաղը հասան, Արջի քոթոթը հարկը սէլի եզներն էլ կերել, հատացրել էր, մնացել էր մի հատ. ըտ էլ ըստէ մորթեց, կերակուր տրեց՝ կերան:

Քառասուն դուր տեհան որ մէշի զրաղին մի մուխ ա բանձըրանում. մնացին զարմացած թէ էս ո՞վ պտի բլնի, սիրտ ա արէ էկէ էս դհերանք, որ զուշն իրա թեւոյր, օձն իրա պօռտովը ընչանք հմի չեն կարացէ առ դնի. Դեւերի մենծ աղպերը, պուճուր աղպօրը զրկեց, տենայ էն ի՞նչ ծուխ ա վեր ըլում՝ մէշի զրաղին: Պուճուր աղպէրը գնաց, տեհաւ մի արջի քոթոթ, հարկի մարդ, կրակի չորս բոլորը նստատել են, կերակուր են ուտում: Հեռուից ձէն տուեց. «Ի՞նչ մարդ էք, որ էս բէվախտին էկել էք մեր մէշի զրաղին կրակ արէ. ինո էք, ջինս էք, ջանաւար էք, թէզ ձէն հանէք, թէչէ ձեզանից մինն էլ ա սաղ չի պրծնի դեւ աղպօրտանց ձեռիցը»:

Արջի քոթոթը գհա կատաղեց. «Դեւ հլա դու մի աղաքարի, տենանք ի՞նչ ջանաւար ես, որ հեռուից ըսենց մենծ մենծ փրթում ես, եննայ կիմանաս թէ մենք ի՞նչ մարդ ենք»: Դեւը մօդկացաւ կրակին թէ չէ, արջի քոթոթը ձեռի դագանակովը մի դրրը որ չտուեց՝ էն սհաթին շրշմեց վեր ընկաւ: Արջի քոթոթը տարաւ սրան սէլիցը պարանով կապեց, որ չբլնի թէ փախչի՝ ինքն էլ եդ էկաւ իրա հացը կերաւ:

Մենծ դեւը տեհաւ որ պուճուր աղպէրը եղացաւ չէկաւ՝ մէկել աղպօրը զրկեց, տենայ խի՞ ետացաւ: Արջի քոթոթը սրա գլխին էլ էն օղիէն հաղաց, տարաւ աղպօր կողքին սէլիցը կապեց: Մի խօսքով, գլխներդ ինչ ցաւացնեմ՝ ըսենց երեսունը իննը դեւին էլ ջերկուն իրար կշտի կապտեց: Մենծ դեւը տեհաւ որ իրա աղպրանինը գնացին՝ էլ եդ չէկան. վերջը ինքը վէկացաւ, կատաղած, փրփրած գնաց տենայ էս ի՞նչ խարար ա, որ նրանք էսքամ եղացան: Գնաց տեհաւ իրա աղպրանինը՝ երեսունը ինն էլ սէլիցը ջերկուն կապտած են. կրակի զրաղին մի արջի քոթոթ, հարկի մարդ նստոտած՝ հաց են ուտում, չարցրեց. «Ի՞նչ մարդ էք, էս փախտին ըստերանք ի՞նչ էք շինում»: Արջի քոթոթը

ձէն, ծպտուն չհանեց, քաշեց դադանակը, սրան էլ մէկել աղ-
պօրտանց հացին հասցրեց, տարաւ նրանց կողքին կապեց:

Առաւօտը որ լիտաշաւ թէ չէ՝ արջի քոթոթը հրամայեց քա-
ռասուն դելին էլ, որ էթան մէշիցը իրանց ձեռովը ցախ կտրեն՝
բերեն սէլերը բարձեն: Դեւերը վրա պրծան մէշին. մի սհա-
թում էնքամ ցախ կտրտեցին, որ հարիր սէլը բարձեցին՝ դեռ
հլա աւելացաւ էլ: Արջի քոթոթը հարիր սէլն էլ իրար եննուց
կապտեց, քառասուն դելին տղաքի սէլիցը լծեց, ինքն էլ ճիպո-
տը ձեռն առաւ նստեց սէլը՝ քշեց: Ըստիան ընչանք թագաւորի
երկիրը որ վեց ամէն ճամփայ էր՝ դեւերը մի ամուսմ էկան.
խաբարը տարան թագաւորին, որ արջի քոթոթը գալիս ա. Թա-
գաւորը մնաց շուարած, թէ էլի պտի գայ, իրան դարգա-
վարամ անի: Են սհաթը հրամայեց էն ջադուքեար պառաւին
քեալլայ անեն, որ սուտ գուտ էկաւ. արջի քոթոթին էնթա-
վուր տեղ զրկել տուեց՝ որ էլ եգ էկաւ:

Արջի քոթոթը բերեց սէլերը դարգիեց թագաւորի ամարաթի
աղաքին: Դեւերին ըստիան ճամփու գրեց իրանց տեղը. ինքը
գնաց թագաւորին ասեց, որ իրա ուղած հարիր սէլ ցախը բե-
րել ու Թագաւորը երեսըհանց իրան ընենց էլ շանց տալի սաքի
թէ նրա ցախ բերելու վրա ուրախ ա. համայ սրտովը ո՛վ գիտայ
ինչթալուր բաներ ին անցկենում:

Թագաւորը կանչիլ ա տալի մի ուրիշ ջադուքեար կնիկ, հարց-
նում թէ չի՞ գիտայ էնթալուր տեղ, որ արջի քոթոթին զրկեն՝
էլ ետ չգայ: Պառաւն ասում ա. «Ֆրանգստունի թագաւորը մի
սիրուն աղջիկ ունի, նրան քեղ հմար բերել տու. ընդէ էթա-
ցողը ոտով գլխով էլ եգ չի գայ»:

Թագաւորը պառաւին անկաջ արեց. կանչեց արջի քոթոթին,
ասեց որ պտի էթայ Ֆրանգստունի, ընդիան թագաւորի աղջիկը
իրան կնկացու բերի: Արջի քոթոթն ասեց. լաւ, ջուլստ աչքիս
վրա, թագաւորն ապրած կենայ:

Առաւօտը որ լիսը բացուեց թէ չէ, արջի քոթոթը ճամփայ
ընկաւ դպա Ֆրանգստուն: Դնաց, գնաց շատն ու քիչը Աստօժ
գիտայ, տեհաւ մի մարդ ամեն մի ոտիցը մի եքայ ջադացաքար
ա կապէ ու ընենց եգին վազ ա տալի, որ ալափստորակը վախ-
չելիս տեղը՝ եննուցը հասնում ա կալնում: Էս մարդը արջի
քոթոթին որ տեսաւ՝ հարցրեց.

— Քոթնիս աղպէր, էտ ո՛ւր էս էթում:

— Եթում եմ Ծրանդատուն, ընդիան թագաւորի աղջիկը մեր թագաւորի հմար կնիկ բերեմ:

— Ի՞նչ կըլնի, ընձ էլ քեզ հեննայ տանես:

— Արի էթանք, մին չըլնեմ՝ թո՛ղ էրկու ըլնենք:

Էրկսով գնացին, գնացին՝ տեհան մի մարդ ծովի միջին կաննել ա. սող ծովը փոքն ա քաշում, գեւ ասում ա. ծարաւ մեռայ: Էս ծով կուլ տառոր հարցրեց.

— Էտ ո՛ւր էք էթում. ընձ էլ ձեզ հեննայ ընկեր չէք անի:

— Խի՞ չենք անի. էրկու չըլնենք՝ թո՛ղ իրեք ըլնենք. արի էթանք:

Ըսենց իրեքով ընկեր էլան՝ գնացին, գնացին, գնացին, շատն ու քիչը Աստօժ գիտայ՝ մի օխար աչքանի ջաղացի աւստ էկան՝ նեքսեւ մտան, տեհան մի ջաղացրան ընդէ ալիր ա տղում. էլ մաջալ չի տալի որ ալիրը գուս գայ, ունցի, հաց թըլի, ուտի, հէնց ընկնց ալիրը հում հում ա նի տալի՝ գեւ հլա ասում ա. «աման մի ճար արէք, սոված մեռայ»:

— Բար, աջողում, ջաղացրան աղպէր, ասեցին մեր ճամփորդները:

— Բարսօլ, Աստու բարին. Տէրն աջողայ գնալներդ ո՛ւր ա:

— Ծրանդատուն, ընդիան թագաւորի աղջիկը բերելու:

— Ար ես էլ գամ ձեր հեննայ, չէք տանի:

— Խի՞ չենք տանի, իրեք չըլնենք՝ թո՛ղ չորս ըլնենք. գալիս ես, արի:

Չորս ֆոգով իրար հեննայ ընկեր էլան՝ գնացին, գնացին, գնացին, շատն ու քիչը Աստօժ գիտայ, տեհան մի մարդ անկաջը գեննին ա կոյրէ՝ լսում ա. հեար խօսում:

— Բարսօլ, իմաստուն աղպէր, ասեցին մեր ճամփորդները:

— Բարին, ձեր որդկերանց արեւը. Աստօժ աջողայ, էգ ո՛ւր էք էթում:

— Եթում ենք Ծրանդատուն, թագաւորի աղջիկը բերենք:

— Չիլնի, ես էլ գամ:

— Խի՞ չիլնի. գալիս ես, արի. չորս չըլնենք՝ թո՛ղ հինգ ըլնենք:

Հնգով խելի տեղ գնացին, գնացին՝ տեհան մի մարդ սաղը ձեռին ածում ա. — էլ սար, էլ քօլ, էլ քար իրանց տեղները:

Ժաժ ին գալի սաղի ձէնիցը. ընչանք երկնքի ղշերն էլ ին գալիս անկաջ անոււմ՝ նրա սաղին: Մեր ճամփորդները ասեցին.

— Բար, աջողում, սաղ ածող աղպէր:

— Բարձիւ, Աստուհազար բարին, խերին. Աստած աջողայ գընալներդ ուր ա:

— Ֆրանգստուն, Թագաւորի աղջիկը բերելու:

— Ի՞նչ կրնի, ընձ էլ ձեզ հեննայ վէ կալնէք:

— Ի՞նչ պոի ընի, գալիս ես, արի. հինգ չընենք, թո՛ղ վեց ընենք:

Վեցով գնացին, գնացին՝ տեհան մի մարդ Մասիոր շալակում ա տանում հուսիս՝ հուսիսը տանում Մասիս: Մեր ճամփորդները ասեցին.

— Բար՝ աջողում, ղօջող աղպէր. էդ ի՞նչ ես անում:

— Ըսկի, զուաթս եմ փորձում. գո՞ք էդ ուր էք էթում:

— Էթում ենք Ֆրանգստուն:

— Զիլնի՞ որ ընձ էլ ընկեր անէք:

— Գալիս ես, արի. վեց չընենք, թո՛ղ օխտն ընենք:

Էս օխտը ֆոգլին—արջի քոթոթը, եգլին վաղողը, անկշտում ջաղացբանը, ծով կուլ տուողը, իմաստունը, սաղ ածողը ու Մասիս շալակողը՝ էկան էկան՝ հասան Ֆրանգստուն: Գնացին դուզ Թագաւորի դուռը ծեծեցին. նօքարը դուռ էկաւ, հարցրեց թէ ումն են ուզում: Արջի քոթոթն ասեց — Թագաւորին: Նօքարը գնաց Թագաւորին իմացում տուեց, թէ օխտը չէշուտ չէշուտ մարդիք ուզում են նրան տենան. թողայ՞ գան, թէ չէ: Թագաւորն ասեց. — գալիս են թո՛ղ գան. տենանք էդ ի՞նչ մարդիք են:

Թագաւորի նօքարը գնաց նրանց կանչեց: Արջի քոթոթը իրա ընկերտանցովը էկաւ Թագաւորի աղաքին կաննեց ասեց.

— Թագաւորն ասրած կենայ. էկել ենք աղջկանդ տանենք. տալիս ես, քո՛ւ խոշովը տո՛ւ. թէ չէ՝ որ բանը մեզ մնայ՝ իմաց կաց զօրով էլ կտանենք: Թագաւորն ասեց.

— Տալը կտամ, համայ իրեք բան կասեմ. թէ արեցիք, հօ աղջիկս ձերն ա ու ձերը. թէ չէ՝ ձեր քոմնքի գլուխն էլ թըռցնիլ կտամ. գուք գիտաք: Արջի քոթոթն ասեց.

— Ապուլ ենք. Թագաւորն ասրած կենայ, կանենք. թէ չկա՛րացինք, մեր արինը քեզ հալալ ա՝ ինչ ուզում ես, արա:

Թագաւորը սաղ իրա երկրումը ջառ գողալ տուեց, որ տունը մի մեծ բղուղ լիքը կերակուր բերի իրա զոնալներէ հմար, Ընենց էլ հացը. — իրա երկրի ամեն փռնչքանցը թամբահ արեց, որ սաղ օրը հա հաց թխեն, իրար եննուց հասցնեն, որ բալքի նրանք դէմ տունեն չկարենան ուտի:

Անց որ թագաւորը թամբահ էր արէ, տունը մի բղուղ կերակուր բերեց. ընենց որ հագար մարդ ուտէր՝ կկշտանար, դեռ հլա կաւելնար էլ: Համայ էս մեր զոնալները օխտը ֆոգով ընենց կերան — ամանները թամբացրին, որ թագաւորը մնաց զարմացած. միտք արեց, որ էս չելաւ. պալի ուրիշ բան միտք անուի, թէ չէ իրա աղջիկը էս արէնխում ջանաւարներէ ձեռը կզցի՝ ֆողէց ֆոգի կկորցնի: Արջի քոթոթին կանչեց, ասեց.

— Ինձանից էս մի մարդ կղրկեմ օխտը սարի քամակը. ընդէ մի անմահական աղբուր կայ, էն աղբից ջուր բերի. դու էլ քու մարդկերանցից զրկի. — ում մարդը թէզ գայ՝ իմաց կաց նա տարել ա:

Արջի քոթոթը ռազի էլաւ. կանչեց էն եգին վաղ տուողին, ասեց որ պալի էթայ օխտը սարի քամակիցը անմահական ջուր բերի: Եգին վազողն ասեց. «Աչքիս վրա քոթոթ աղպէր. դրանից էլ հեշտ բան կայ աշխարքում»: Համայ ըս էլ պալի ասեմ, որ թագաւորը սրանից մի շաբաթ ազաք հրեղէն ձիաւոր մարդ էր զրկէ անմահական ջրի, որ նրանից թէզ գայ. չունքի էն ճամփէն շատ հեռու էր — էրկու, իրեք շաբթումը լաւ քեահլան ձին անջախ էթար՝ գար:

Համայ եգին վազողը ընենց գնաց, որ թագաւորի զրկած ձիաւորին ճամփին ռատտ էկաւ, նրանից անց էլ կացաւ. գնաց անմահական աղբրիցը ջուր լցրեց, եգ էկաւ՝ դեռ նա նոր էր հասէ աղբուրը: Տարաւ անմահական ջուրը թագաւորին տուեց: Թագաւորն ասեց. «Աղպէր, էս հետ էլ աղտեցիք. մնաց մի բան, թէ ըսել արիք՝ հօ՛ աղջիկս ձերն ա, տարէք, ձեզ հալալ ընի: — Իմ համամը տաքացնիլ եմ տուէ. գնացէք թամուղ լեղացէք, ընդիան էկէք հաց կերէք. հացից եզը աղջիկս վէ կալէք տարէք. ոտով գլխով ձեզ եմ տալի»:

Արջի քոթոթը իրա ընկերտանցով գնաց թագաւորի համամը: Թագաւորը աղաքուց թամբահ էր արէ իրա նօքարներին որ համամը էնքամ տաքացնեն, որ նրանք մենեկու բաշտան՝ տեղն ու

տեղն խաշուին, մնան: Արջի քոթոթը գնաց համամ, տեհաւ էնքամ տաքացրել են, որ պատերն էլա կարմրէ. հեռուից նրա գօլը մարդի էրսւմ ա, թողոււմ. ծով կուլ տուողին ասեց, որ փչի, համամը սառչնի: Ծով կուլ տուողը որ մին չփչեց՝ համամի պատերը, ջուրը ընինց սառնացան, հէնց իմանաւ ըսկի տաքացրած չըլնէր. Քոմմըքով էլ մտան հաւուղը, չին չին լեղացան, դուս էկան գնացին թագաւորի կուշար, որ հաց ուտեն՝ եննայ նրա աղջկանը վեր ունեն, տանեն:

Թագաւորը տեհաւ, որ ոչ մի բանով էլա չկարաց արջի քոթոթին զօսի՝ իրա նօքարնիկին հրամայեց, որ նրանց աղաքը կերակուր բերելիս՝ ամանների մէջը գեղ գցեն, որ նրանք ուտեն թէ չէ, տեղն ու տեղը չորանան. բալքի սրանով պրծնի էս մարգահեր ջանաւարների ձեռիցը: Ար հացի նստեցին, նրանց իմաստուն ընկերը անլաժը գեննին գրեց՝ ալբիալը հասկացաւ որ իրանց ամանները դեղել են: Ընկերտանց անկաջին փափաց, թէ իրանց աղաքի կերակրների մէջը գեղ ա գցած՝ չուտեն:

Սաղ ածող ընկերը էս որ իմացաւ՝ իրա սաղն ածեց. — Թագաւորը, նրա կնիկը, աղջիկը, նօքարները՝ բիրադնով էլ սաղի ձէնիցը խէքամաղ էլան, մնացին: Ընչանք նրանց աղաքի ամաններն էլ սաղի ձէնը սր լսեցին, իրանց տեղներից ժաժ էկան. — գեղած ամանիքը գնացին թագաւորի ու նրա տանըցոնց աղաքը, նրանց ամանիքը էկան սրանց աղաքը: Սաղ ածողը սաղը ձեռիցը վէ գրեց, որ նոր նրանք կարացին հաց ուտի: Թագաւորը իրա ամանիցը որ մի գրտալ չկերաւ՝ էն սհաթը միջից տրաքեց՝ չաթմիշ էլաւ: էս որ տեհաւ թէ չէ նրա կնիկը՝ վախլութիւնից նա էլ տեղն ու տեղը ընտէ մեռաւ:

Սրանից եղը, հալքաթ արջի քոթոթի ձեռը էլ ո՛վ կարար բռնի, թագաւորի աղջիկը նրանն էր ու նրանը. ուղենար վէ կոճէր, կտանէր իրանց թագաւորին: Համայ մըկէլ միաք արեց, թէ խի՞ տանի նրան. հաղիր իրան կնիկ կը շինի՞. — Իրա ընկերտանցով թագաւորի զօշնի հեննայ կռիւ արեց՝ աղտեց. ինքն էլ նստեց ընդէ թագաւոր: Թագաւորի աղջիկն էլ իրան կնիկ առաւ՝ օխտն օր, օխտը քշեր հարսանիք արեց:

Աստանից իրեք խնձոր վեր ընկաւ. — մինն ասողին, մինն ասիլ տուողին, մինն էլ անկաջ գնողին:

(Շարունակել)

Տ. Նա—տա—րա—ւանց:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԵԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ: